Հողը Հայրենիք է դառնում,

երբ ապրո՛ւմ ես այնտեղ եւ տե՛ր ես նրան...

Ամենամյա դրամահավաք - հեռուստամարաթոնի միջոցները Շուշիի վերականգնմանը նպատակաուղղելը, անշուշտ, դրական է և դրվատելի: Բայց երբ խնդրին մոտենում ենք, ընդհանուր առմամբ, Արցախի վերաբնակեցման հրամայական անհրաժեշտությունից ելնելով, ապա, անկեղծ ասած, իրավիճակն այնքան էլ մխիթարական ու հուսադրող չէ...

Պատերազմից հետո, եթե չենք մոռացել, ծրագիր մշակվեց, ավելի շուտ մեր քաղաքականությունը միտված էր Արցախի, հատկապես ազատագրված տարածքների վերաբնակեցմանը, սակայն այն կիսատ մնաց, և այսօր, փաստորեն, նման ծրագիր չի իրականացվում: Գտնվեցին մարդիկ, ովքեր ոգևորված գնացին, աշխատանք գտան ու ցանկություն հայտնեցին բնակվել Արցախում: Նույն այդ մարդիկ, ցավոք, նույնչափ հիասթափված վերադարձան Հայաստան... Գոյություն ունի մի պարզ ճշմարտություն՝ հողը Հայրենիք է դառնում, երբ այնտեղ ապրում են հողի տերերը: Այնպես որ, Արցախը չվերաբնակեցնելը պարարտ հող է նախապատրաստում լայնածավալ արտագաղթի համար, ինչը կարող է ուղղակի կործանարար լինել Ղարաբաղյան խնդրի մեր հետագա պայքարում: Նամանավանդ այս օրերին, երբ հայ-թուրքական հարաբերությունների գործընթացի կուլիսներում շատ է խոսվում Արցախի կարգավիճակի մասին: Ուստի և հավատացած ենք, որ հայկական այս տարածքի վերաբնակեցումը, պարզապես, հրամայական անհրաժեշտություն է, Արցախի հողերին կենդանություն տալը մեր իշխանությունների քաղաքականության առաջնահերթությունը:

Վերաբնակեցման մասին, ցավոք, մենք միայն խոսել ենք, դեպքից դեպք բարձրացրել այդ խնդիրը: Արդարանալ միջոցների բացակայության հանգամանքով, անշուշտ, ճիշտ չի լինի: Ցանկության դեպքում, ինչ խոսք, միշտ էլ համապատասխան միջոցներ կգտնվեն: Համենայնդեպս, նման ծրագիր իրականացնելու քաղաքական կամքը բացակայում է: Ըստ ականատեսների պատմածների, տվյալ հարցում բավականին հետևողական ու նախանձախնդիր են ադրբեջանցիները: Նրանք, օրինակ, երբ Շահումյանի շրջանում 2-3 ամսով մի քանի գյուղ էին գրավել, շատ արագ վերաբնակեցրել էին: Ավելին, գրավելու արդեն երրորդ օրը բնակիչներ էին բերել, և երբ երեք ամիս հետո մերոնք գյուղերը հետ վերցրեցին, շատ զարմացան տները էլեկտրաֆիկացված տեսնելով: Լինում էին անգամ դեպքեր, երբ տանտերը գալիս էր իր տուն և այնտեղ սառնարան, հեռուստացույց հայտնաբերում Սա՝ թե ինչպես են վերաբերվել իրենց «բնակիչներին» մեր հարևանները: Իսկ մենք... Ամենևին էլ զարմանալի ու պատահական չէ, որ բնակչության թվաքանակի աճ չկա, շատ գյուղերում հատուկենտ

⇨ 3

Հողը Հայրենիք է դառնում...

բնակիչներ են մնացել: Այսօր միայն որոշ ենթակառուցվածքային ծրագրեր են իրականացվում (գազիֆիկացում, էլեկտրաֆիկացում, ճանապարհների վերականգնում), ինչդեռ ոչ պակաս կարևոր ու համայնական է նոր բնակմակեսների շահագործումը: Փոքրաթիվ բնակիչներն էլ, ասես, անուշադրության մատնված լինեն: Մոտավոր հաշվումներով, օրինակ, Քաշաթաղի շրջանն ունի 6-7000 բնակիչ, ինչը Հայաստանի մի մեծ գյուղի բնակչության թվից էլ փոքր է: Մենք եղածին տեր չենք կանգնում տաք-տաք խոսելով միայն կորցրածը հետ վերադարձնելու պահանջատիրությունից: Չէ՞ որ տարածքը միմիայն բնակեցվելով կարող է հայրենիք դառնալ, իսկ հողը մշակվելով ու յուրացվելով:

Միով բանիվ , քանի դեռ գոյություն ունի պատերազմի վերսկսման վերահաս վտանգը, մեզ համար օրախնդիր է Արցախի ամրապնդումն ու հզորացումը: Իսկ դրա համար, մեր համոզմամբ, նախևառաջ Արցախ պետք է վերադառնան նրանք, ովքեր ապահով կյանք ու ճոխ ապրուստ ստեղծելու նպատակով լքել են իրենց հայրենի բնօրրանը, իրենց ծննդավայրը: Արցախի նորանկախ պետության սահմանները պետք է պաշտպանեն արցախցիները, ում զորավիգ պիտի լինի Հայաստան պետությունը, յուրաքանչյուր հայ աշխարհի որ ծեգում էլ նա գտնվի...